«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Առակը որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց
ԱՌԱՐԿԱ	Գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Լուսյա Կիրակոսյան
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԿԳՄՄՆ «Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա.Ծատուրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….……..….3

Հիմնական մաս

Գլուխ 1 Առակի առանձնահատկությունը, տեղը և դերը ուսուցման գործընթացում

1.1 Առակը՝ որպես գրական ժանր……..…….. 5

1.2 Առակի դերը աշակերտների բարոյական դաստիարակության և ստեղծագործական մտածողության զարգացման գործում……10

1.3 Առակի ուսուցման մեթոդական շղթան…….……12

Եզրակացություններ……..…19

Օգտագործված գրականության ցանկ……...…20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողների արժեհամակարգի ձևավորման համար հանրակրթության բնագավառում անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, այդ թվում՝ չափազանց մեծ է գրականության դերը, որի կարևորագույն խնդիրներից մեկը գրական ստեղծագործությունների ուսուցումն է: Դպրոցականի ընթերցանության շրջանակը ընդգրկում է մեծ թվով բազմազան ժանրեր, որոնք ներառում են և՛ պոեզիա, և՛ արձակ: Ելնելով երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունից՝ կարող ենք ասել, որ նրանք ավելի լավ են ընկալում այն ստեղծագործությունները, որոնք պարունակում են վառ և հուզական պատկերներ, քան գրավիչ ոճից զուրկ գիտական պատմությունները, որոնք չեն գործունացնում աշակերտի երևակայությունը կամ մտածողությունը: Աշակերտն ավելի հակված է ընկալելու բանաստեղծական գործերը, քանի որ արտաքին կառուցվածքը, ռիթմը օգնում են ստեղծելու տեքստի ներդաշնակ ոճ և բարելավել դրա ընկալումը, ինչը մեծացնում է աշակերտի հետաքրքրությունը՝ ուսումնասիրելու այդ գրական աշխատանքը: Կարևոր առաջադրանքներից մեկն է նաև դասի ժամանակ երեխաներին արտահայտիչ կարդալ սովորեցնելը, այդ իսկ պատճառով չափածո ստեղծագործությունները ուսուցման առավել հաջող ատաղձ են, որովհետև տեքստում արդեն կա ընթերցանության որոշակի ռիթմ, չափավորված ընթացք՝ դադարներով զուգակցված: Աշակերտը, երբ կարդում է չափածո ստեղծագործությունը և ճշտությամբ պահպանում է արտահայտիչ ընթերցանության միջոցները կամ ընկալում է, երբ ուսուցիչն է կարդում, շատ ավելի հեշտ է ներթափանցում ստեղծագործության մեջ և կարողանում է իր երևակայությամբ ստեղծել իր մտքի գեղարվեստական կերպարը:

Դպրոցում ուսումնասիրվող գրական ստեղծագործություններից մեկն էլ առակն է: Առակը կարող է լինել չափածո կամ արձակ, բայց դպրոցում առավել հաճախ օգտագործվողը չափածո առակն է: Աշակերտներին ուսուցվում են Եզոպոսի, Ֆեդրոսի, Իվան Կռիլովի, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու առակները:

Առակն ունի բարոյական մեծ արժեք, որը թույլ է տալիս դպրոցական տարիքում երեխաների մեջ ձևավորել սոցիալական հմտություններ և արժեքային

համակարգ, դրական վարքականոն, բացի այդ՝ նպաստում է ստեղծագործական, վերլուծական, երևակայական, քննադատական մտածողության զարգացմանը:

Աշխատանքի արդիականությունը:

Առակները դպրոցական դասագրքերում բազմաբնույթ են: Սրանց ուսուցումն անհրաժեշտ և արդիական է այնքանով, որ նպաստում է սովորողների մեջ համամարդկային արժեքների դաստիարակմանը: Դաստիարակությունը գործընթաց է, որի արդյունքում ձևավորվում է անհատը՝ իր արժեհամակարգով, ընկալումներով, վերաբերմունքներով ու գործելակերպերով, որն արդիական է ամեն ազգի, ամեն հասարակության, ամեն պատմական ժամանակաշրջանի համար: Առակը նպաստում է մտածողության, տրամաբանության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, ինքնուրույն աշխատելու, եզրակացություններ և դատողություններ անելու կարողությունների զարգացմանը:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Առակի բովանդակությունը վերլուծելով՝ սովորողները կարող են ընկալել նրանում թաքնված մտքի փոխաբերական իմաստը, տեսնել և որոշակի կապեր հաստատել ստեղծագործության կերպարների միջև և, որ կարևոր է, սովորել գրական կերպարները տեղափոխել իրական կյանք կամ հակառակը: Հետևաբար, դպրոցում առակի ուսուցումը ունի կրթական մեծ արժեք:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է վերհանել դպրոցում առակի ուսուցման արդյունավետությունը ժամանակակից մեթոդներով:

Աշխատանքի խնդիրներն են՝

ա) ուսումնասիրել թեմային առնչվող գրականությունը,

բ) ցույց տալ առակի դերն ու նշանակությունը աշակերտի բարոյական դաստիարակության գործում,

գ) ներկայացնել առակի ուսուցումը տարբեր դասարաններում,

դ) կատարել փորձարարական աշխատանք թեմայի վերաբերյալ:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ԱՌԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 ԱՌԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐ

Առակը՝ որպես գրական ժանր, յուրահատուկ է ոչ միայն կառուցվածքով, այլև բովանդակությամբ:

Առակի ստեղծման պատմությունը կապվում է հին Հունաստանի հետ: Այնտեղ են առաջին անգամ առաջ քաշել առակ գրելու կանոններն ու օրինաչափությունները, որի հիման վրա էլ մերօրյա հեղինակները ստեղծում են առակը:

11-13-րդ դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը: Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները, որոնք ոչ միայն հայերեն, այլև աշխարհի լեզուներով բազմաթիվ հրատարակություններ են ունեցել: Վարդան Այգեկցու առակների մեծ մասն ամփոփված է «Աղվեսագիրք» խորագրով ժողովածուի մեջ: Ահա «Իմաստուն զինվորը» առակը: Մի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, և նա երկու ոտքով կաղ էր: Եվ զինվորներից մեկը նրան ասաց. «Ո՜վ ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող»: Եվ նա ասաց. «Ո՜վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու»: Միջնադարյան հայ առակների մասին արժեքավոր ուսումնասիրություն է կատարել նշանավոր հայագետ Ն. Մառը: Նոր ժամանակում իրենց առակներով հայտնի են Խ. Աբովյանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ա. Խնկոյանը:

Առակը ձևավորվել է ժողովրդական բանահյուսության մեջ և սկզբնապես հանդես եկել որպես կենդանիներին վերաբերող հեքիաթի տարատեսակներից մեկը՝ սեղմ սյուժեով ու այլաբանական բովանդակությամբ: Առակի իսկական հերոսը միշտ մարդն է: Սակայն մարդկային կյանքի, բնավորության, հարաբերությունների հոռի կողմերը առակում ծաղրվում են այլաբանորեն՝ կենդանիների, երբեմն բնության երևույթների, տարբեր առարկաների կերպարներով[8]:

Յուրաքանչյուր առակ ներկայացնում է ոչ մեծ իրադրություն կյանքից, որի հիման վրա հեղինակը ներկայացնում և ծաղրում է մարդկային արատներն ու

գովերգում ժողովրդի իմաստությունը: Առակներում նկարագրված կենդանիների ու իրերի փոխհարաբերության մեջ բավականաչափ թափանցիկ կերպով քննադատվում են մարդկային բնավորության զանազան վատ գծերը, հասարակության տարբեր խավերի փոխհարաբերությունները, վատն ու չարը: Առակներում յուրաքանչյուր կենդանի հանդես է գալիս իր այն վարքագծով, որով հայտի է մարդուն նրա դարավոր կեսափորձից: Օրինակ՝ նապաստակը հանդես է գալիս որպես վախկոտության մարմնացում, աղվեսը՝ խորամանկության, գայլը՝ ագահության և այլն, ուստի և հեշտությամբ հասկացվում է, թե հեղինակն ինչ է ցանկանում ասել այդ առակով, ում ինչի համար է ծաղրում:

Հնում առակները հիմնականում գրվել են արձակ ձևով: Այդպես են, օրինակ, Եզոպոսի, Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու առակները: Հետագայում առակներ սկսեցին գրել միայն չափածո: Այդպես են գրված Լաֆոնթենի, Կռիլովի, Աբովյանի, Խնկոյանի և այլոց առակները:

Չափածո առակները սովորաբար գրված են լինում ազատ բանատողով, ըստ որի՝ փոխվում է ստեղծագործության մեջ տողերի չափը: Բանաստեղծական այսպիսի ձևերի կիրառումը, որը հնարավորություն է տալիս ճիշտ ու գեղեցիկ կերպով հաղորդելու առակի համար բնորոշ ծաղրը, հակիրճ, դիպուկ ու սուր երկխոսությունները, բանաստեղծական չափի ու ձևերի, լեզվի արտահայտչական միջոցների բազմազանությունն ու փոխնիփոխ միմյանց հաջորդելը, առակը դարձնում է հեշտ ու հետաքրքիր ընթերցվող, դյուրընկալելի ու տպավորիչ:

Առակն իր ժանրային առանձնահատկություններով որոշ չափով նման է ինչպես պատմվածքին, այնպես էլ հեքիաթին: Եթե պատմվածքի նման առակը ևս սյուժե, գործող անձերի պայքար ու իդեա ունի, ապա հեքիաթի պես նրա մեջ առկա են կենդանիների, առարկաների ու երևույթների անձնավորումը, ուժեղ երևակայությունն ու գույների խտացումը: Եվ դա պատահական չէ: Ինչպես հայտնի է, առակները ծագել են հեքիաթներից և ավելի ուշ են հանդես եկել, քան հեքիաթները:

Առակները սովորաբար բաղկացած են լինում երեք մասից՝ պատմողական, տրամաբանական և բարոյական կամ եզրափակման: Առակի բարոյական կամ բարոյախրատական մասում, որը մեծ մասամբ տրված է լինում առակի վերջում, արտահայտված է լինում պատմողական ու տրամաբանական մասերից բխող

բարոյական եզրակացությունը: Այդ եզրակացության կամ խրատական մասի մեջ արտացոլված են լինում ժամանակի ոգին ու տվյալ հասարակարգի բարոյական նորմերը:

Առակի ծավալը որպես կանոն չի գերազանցում 20-30 տողը, բայց, չնայած ծավալային սահմանափակությանը, այն իր մեջ մեծ խորհուրդ է պարունակում:

Առակները ոչ միայն կենցաղային, այլև հասարակական-քաղաքական բովանդակություն ունեն: Շատ առակներ ուրույն ձևով արտացոլում են նաև պատմական այս կամ այն ժամանակաշրջանի հասարակական ու սոցիալական փոխհարաբերությունները: Հետևաբար, առակները որոշակի արժեք են ներկայացնում նաև տվյալ ժամանակաշրջանի, հասարակական կարգերի խոցելի կողմերի ու մարդկանց փոխհարաբերությունների ճանաչման տեսակետից: Այս առումով առակները նպաստում են ընթերցողի մեջ քննադատական վերաբերմունքի ձևավորմանը, զարգացնում են նրա երևակայությունն ու տրամաբանական մտածողությունը: Ուստի պատահական չէ, որ շատ հին ժամանակից սկսած՝ առակները տեղ են գտել դասագրքերում որպես երեխաներին կարդալ, պատմել, մտածել ու դատել սովորեցնելու միջոց:

Յուրաքանչյուր առակ իր մեջ որոշ այլաբանություն կամ փոխաբերություն ունի, որի բացահայտումից է կախված նրա նպատակի պարզաբանումը: Ամեն մի առակ որոշակի բարոյական եզրակացություն կամ խրատ է պարունակում, որը նրա ավարտն է, նրա դաստիարակչական էության խտացումը, ուստի դրա բացահայտումից են կախված առակի դաստիարակչական ու գեղագիտական ազդեցության խորությունն ու կայունությունը: Հենց սրանք, այսինքն՝առակի այլաբանության և բարոյախոսության բացահայտումն էլ կազմում են նրա ավանդման հիմնական առանձնահատկությունը:

Իհարկե, առակները աշակերտների համար արժեքավոր ու սիրելի են ոչ այնքան իրենց գործող անձերի փոխհարաբերություններով ու բարոյական եզրակացություններով, որքան հենց առակի ժանրին բնորոշ գեղարվեստականությամբ՝ կերպարների գունեղությամբ, գործող անձերի բազմազանությամբ ու գործողությունների աշխուժությամբ: «Հետևաբար՝ սխալ կլինի կարդալ առակը միայն նրա համար, որ սրանից հետո հարցնենք, թե ովքեր են նկատի

առնված առակի կերպարների տակ: Դա միանգամայն վերացական տրամաբանական աշխատանք կլինի, և դրանից երբեք չի կարելի սկսել: Նման աշխատանքից բոլորովին կկորչի կամ միանգամայն կիջնի առակի կերպարների ազդեցությունը»[11]:

Ամենից առաջ անհրաժեշտ է առակներն ուսումնասիրել որպես սովորական գեղարվեստական ստեղծագործություններ՝ ձգտելով հասնել այն բանին, որ աշակերտները միանգամայն լուրջ ընդունեն նրանցում եղած գործող անձերի անձնավորումը, նրանց կատարած մարդկային գործողությունները, խոսակցություններն ու դատողությունները:

Առակներն անցնելիս ուսուցչի հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի առակները ճիշտ ընկալել տալու վրա, որից և կախված կլինի նաև նրանցում եղած այլաբանությունների ճիշտ ընկալումը:

Դրան հասնելու համար առակները, նախ, պետք է ուսումնասիրել որպես գեղարվեստական ստեղծագործություններ, զրույցի միջոցով համապատասխան տրամադրություն ու պայմաններ ստեղծել բովանդակության ճիշտ ընկալման համար, սովորեցնել այն լավ կարդալ, բացատրել բառերը, ընտրովի ընթերցանության միջոցով բացահայտել գործող անձերի բնավորության բնորոշ գծերը, բնութագրել նրանց, ընդարձակ ու համառոտ ձևով վերարտադրել բովանդակությունը, բնութագրել կամ գնահատել գործող անձերին կամ նրանց արարքները և այլն:

Երբ սովորողները ճիշտ ու բազմակողմանիորեն ընկալած կլինեն առակի սյուժեն, այն ժամանակ միայն կարելի կլինի անցնել առակում եղած այլաբանության բացահայտմանը, որպեսզի առակի գեղարվեստական ազդեցությունը չթուլանա: Ինչպես նկատում է Ն. Ն. Շչեպետովան՝ «միայն ամփոփիչ զրույցի ժամանակ է, որ երեխաներն ուսուցչի ղեկավարությամբ կարող են պարզաբանել առակի այլաբանությունը և ցույց տալ նրա բարոյախոսական իմաստը»[10]:

Ժամանակից շուտ առակի այլաբանության ու բարոյախոսության բացահայտումը կթուլացնի նրա գեղարվեստական ու դաստիարակչական ազդեցությունը, ինչպես Ս. Մադինյանն էր ասում, ոչ թե բարոյական օրինակ ցույց կտա, որը բխում է առակի էությունից, այլ կվերածվի բարոյական քարոզի, որը երեխաների համար խորթ ու անընդունելի է[9]:

Առակի բարոյական կողմի կամ տրամաբանական եզրակացության մեկնաբանությունն ավելի մատչելի, յուրացումն ավելի կայուն ու խոր դարձնելու նպատակով այն կարելի է ամրապնդել համապատասխան առածներով ու ասացվածքներով, որոնք առակի հիմնական միտքն արտահայտում են պարզ, հակիրճ ու անմիջական կերպով: Պետք է նկատել, որ առակների վերջում, իսկ երբեմն էլ սկզբում տրված բարոյախրատական եզրակացությունը շատ նման է առածներին ու ասացվածքներին, իսկ հաճախ էլ ուղղակի արտահայտված է դրանցով, հետևաբար երեխաներին ծանոթ ու հայտնի համպատասխան այլ առածների, ասացվածքների օգտագործումն ավելի կոնկրետ ու դյուրընկալ կդարձնի առակի բուն բովանդակության ըմբնումը:

Առակի ավանդման այս ձևը աշակերտներին հնարավորություն կտա թափանցելու գեղարվեստական ստեղծագործության ներքին բովանդակության մեջ, հասկանալու ոչ միայն այն, ինչ գրված է, այլև այն, ինչ չի գրված, բայց հեղինակը ցանկացել է ասել[9]:

Առակը նման է պատմվածքի. Ունի բովանդակություն, հերոսներ, տեղի են ունենում դեպքեր, առկա է գաղափարը, ենթատեքստը, կան նկարագրություններ:Այն նման է նաև հեքիաթին, կան կենդանիներ, որոնք խոսում են, գործում, դատողություններ անում: Առակի հերոսներն ունեն բնավորության խտացված գծեր, նրանց արարքները մատչելի են աշակերտներին, որովհետև վերցրած են կյանքից[3] :

Գրիգոր Մագիստրոսը նամակներից մեկի մեջ պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության և ճարտասանության հետ նաև «առասպելավարժություն», այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և հորինել տալ առակներ[1]:

Մխիթար Գոշը առակների մեջ տեսնում է երկու մաս՝բուն պատմություն և խրատական եզրակացություն:

Պատմությունը, որ նա կոչում է առակ, գաղափար, օրինակ, եղանակ և այլ անվանումներով, ըստ Մխիթար Գոշի՝ լինում է երեք տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և գրեթե գործողություն չունեն: Առասպելական առակների մեջ պատմությունը վերաբերում է կենդանիներին,

երբեմն և բույսերին՝ իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են:

Խրատական եզրակացությունը, որ հեղինակը կոչում է խրատ, նշանակ, ճշմարտություն և այլ բառերով, երկու տեսակ է՝ աշխարհիկ և եկեղեցական:

Առակը հորինվում է ոչ իբրև ինքնուրույն բանաստեղծական տեսակ, այլ իբրև մի ուսուցողական, դիդակտիկական երկ, որ նպատակ ունի ախորժելի ձևով խրատելու և ազդելու ունկնդրի (ընթերցողի) վրա: Երբեմն գործողությունն այնպես կարճ է պատմվում, որ նույնիսկ խրատական մասն ավելի մեծ տեղ է զբաղեցնում, քան պատմությունը: Առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվել է, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. Ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը: Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. Ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակում են մնալ որպես գրական տեսակ[1]:

1.2. ԱՌԱԿԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հանրահայտ է, որ կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սերունդներին փոխանցմանը: Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները: Հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել դպրոցականների հուզաշխարհի վրա: Այս առումով հայ գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն առակները, որոնց միջոցով աշակերտների մեջ դաստիարակվում են հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն: Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում: Հենց դա է պատճառը, որ դպրոցում մեծ տեղ է հատկացվում

առակներին: Անընդհատ մշակվել և մշակվում են առակները աշակերտներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմնական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է:

Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի գրականության դասընթացում, քանզի անգնահատելի է առակի թե՛ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը: Առակներն այլաբանորեն, ոչ ուղղակի կերպով աշակերտ ընթերցողներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն, սակավապետություն: Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն, ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով: Աշակերտը հասկանում է, որ առակի հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են: Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների օգնությամբ, եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային վերաբերող առածների, ասացվածքների կիրառմամբ:

Այսպիսով՝առակների դասավանդումը դպրոցում երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի միջից վերացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները: Առակների միջոցով զարգանում են նաև աշակերտների ընթերցասիրությունը, կարդալու որակական հատկանիշները: Դասագրքեր ընդգրկված հայ և այլազգի առակագիրների ստեղծագործություններն իրենց պարզ ու մատչելի գրելաոճով միշտ էլ սիրելի ու հետաքրքիր են հայ ընթերցողների համար: Ուստի տեղին է նշել, որ ավելի լավ կլիներ գրականության դասագրքերում ընդգրկել շատ ավելի լայն և ընդգրկուն թեմատիկ շարք՝ դասական գրականության, ինչպես նաև նոր ժամանակների առակների նմուշների ներառմամբ:

Փոխգործուն ընթերցանության ուղեցույցի մեթոդն առավել արդյունավետ է լինում ընթերցանության դժվարություններ ունեցող աշակերտների համար: Ավելի հմուտները նրանց դերային հանձնարարություններ են տալիս և աշխատանքը ներկայացնում են յուրօրինակ բեմականացմամբ: Առակների հաջորդական

ուսուցումից հանգում ենք ինքնատիպ խճանկարի: Առանձին-առանձին կարդալով յուրաքանչյուր առակ՝ աշակերտները դրանք ամբողջացնում են որպես մեկ ընդհանուր առակի տարրեր՝ հորինելով նոր ընդհանրական առակ:

Առակների բովանդակության բացահայտման ժամանակ աշակերտները հասկանում են, որ իրենք ազատ են և կաշկանդված չեն տվյալ առարկայի շրջանակներում: Նրանք առակների թեմաներով նկարազարդումներ են կատարում, գրքեր են կազմում, երգեր են կատարում և վերջապես հանգում են մտքի տրամաբանական ավարտի: Առակների բեմականացման ժամանակ նրանք սովորում են ճիշտ խոսել՝ գիտակցելով խոսքի կառուցվածքը, լեզվական արտահայտության առանձնահատկությունները: Նման դասերի ժամանակ պետք է գնահատվի աշակերտի կատարած յուրաքանչյուր գործողություն խելամիտ քաջալերման եղանակով, սակայն իրական գնահատականը պետք է լինի վերջում՝ որպես ուշացած գնահատական: Աշակերտը պետք է իմանա, որ վերջնական պարգևատրումը կատարած աշխատանքի արդյունավետությունը հիմնավորելուց հետո է միայն հնարավոր: Նման երկարաժամկետ նախագծերը տևում են շաբաթներ՝ կարևորելով գիտելիքների ձեռքբերման համար շարունակական ջանքեր գործադրելու արժեքը:

1.3. ԱՌԱԿԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՇՂԹԱՆ

Մեր կարծիքով, դպրոցական ուսուցման գործընթացում առակները կարևոր տեղ են գրավում և ունեն իրենց հետ աշխատանքի հատուկ առանձնահատկություններ: Առակն ունի ոչ միայն իր տեքստային բովանդակությունը, այլև թաքնված միտք և մեծ մասամբ բարոյախրատական մաս, որը կարող է գտնվել և՛ սկզբում, և՛ վերջում:

Առակի հետ աշխատելու մեթոդիկան հիմնվում է նրա՝ որպես էպիկական ժանրի առանձնահատկությունների վրա: Այն ունի կարևոր բնութագրիչ գծեր՝ բարոյախրատական մասի առկայություն, այլաբանություն և այլն: Առակում սովորաբար կյանքի որևէ իրադարձություն նկարագրվում է կենդանիների միջոցով, որոնք խոսում են մարդու նման:

Դպրոցում առակի հետ աշխատանքը նպատակ ունի բարոյախրատական մասի և այլաբանության բացահայտման, ինչպես նաև բովանդակության և տեքստի

վրա վերլուծական աշխատանքի կատարման: Այն կարելի է ներկայացնել հետևյալ բաղադրիչներով («*ճպուռն ու մրջյունը»* առակի օրինակով):

Խթանում

1. Կարելի է սովորողներին բաժանել խմբերի և խմբերին առաջադրել գրել այն կենդանիների անունները, որոնց իրենք հանդիպել են առակներում, և գրել, թե բնավորության ինչ հատկանիշներ են նրանք դրսևորել (օրինակ՝ աղվես-խորամանկություն): Ապա յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը, մյուս խմբերը կատարում են լրացումներ:

Իմաստի ընկալում

(նախքան տեքստի ընթերցումը՝ կանխագուշակում, նպատակադրում)

2. **Տեքստի բովանդակության կանխագուշակում**

Այսօր ընթերցելու ենք մի առակ, որը գրել է Աթաբեկ Խնկոյանը: Իսկ թե ովքեր են առակի հերոսները, կիմանանք, եթե կռահեք հետևյալ հանելուկների պատասխանները.

Ամբողջ օրը ջրի վրա
Իր ստվերն է որսում,
Ինքը ծույլ է, բայց ժրաջան
Մրջյունին է բամբասում: (ճպուռ)

Բանում է՝ մարդ չէ,
Ածում է՝ հավ չէ,
Կծում է՝ շուն չէ,
Իմացիր՝ ի՞նչ է: (մրջյուն)

Ապա աշակերտներին կարող են տրվել հետևյալ հարցերը.

- Կենդանիների ո՞ր խմբին են պատկանում մրջյունն ու ճպուռը:
- Ինչպիսի՞ տեսք ունեն դրանք (մրջյունը փոքրիկ է, նրա մարմինը կազմված է գլխից, կրծքից, ցողունուկից և փորիկից: Կան թևավոր և անթև տեսակներ, իսկ ճպուռները խոշոր միջատներ են՝ բարեկազմ, փայլուն, երկարացած մարմնով, երկար փորիկով, ունեն թափանցիկ թևիկներ):

- Ի՞նչ եք կարծում, ե՞րբ և որտե՞ղ կարելի է հանդիպել մրջյուններին (ամռանը իրենց բնակավայրերի՝ մրջնանոցների կողքին):
- Երբևէ տեսե՞լ եք, թե մրջյուններն ինչ են անում ողջ օրվա ընթացքում (մրջյուններն ամբողջ օրը դեպի մրջնանոց են քարշ տալիս արևածաղկի սերմեր, որդեր և այլն):
- Իսկ որտե՞ղ կարելի է հանդիպել ճպուռներին (ծաղկից ծաղիկ թռչկոտելիս):
- Ի՞նչ եք կարծում, մարդկային բնավորության ի՞նչ հատկանիշներ են ներկայացնելու այս միջատներն առակում (լսել սովորողների պատասխանները):

Այժմ կընթերցենք և կճշտենք՝ ճի՞շտ էին արդյոք մեր կանխագուշակումները միջատների բնավորության հատկանիշների վերաբերյալ:

Տեքստի ընթերցման ընթացքը

3. Տեքստի լուռ ընթերցում՝ հատվածներով

–Մտքում դանդաղ, ուշադիր կարդացե՛ք առակը՝ փորձելով պարզել, թե արդյոք ճի՞շտ էին ձեր ենթադրություններն առակում հանդես եկող միջատների բնավորության հատկանիշների վերաբերյալ:

4. Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու նպատակով

Հարց

Ինչո՞վ համընկան ձեր կանխագուշակումները:

5. Տեքստի բարձրաձայն ընթերցում՝ ամբողջական հատվածներով

Ընթերցվում է մեկնաբանություններով: Իրականացվում է նաև բառային աշխատանք (նորանծանոթ բառերի իմաստների ճշգրտում և բացատրություն):

- Հեղինակն ու՞մ է համարում **թռի-վռի:** Ի՞նչ ես կարծում, ինչու՞ է այդպես անվանում նրան:
- Ի՞նչ եք հասկանում **ցուրտը տարավ** արտահայտությամբ:
- Ի՞նչ է նշանակում **բռնի վեր-վերի** արտահայտությունը:

- Ի՞նչ է նշանակում **սանամեր** բառը (*սանամեր* նշանակում է *սանամայր, զավակի մայրը կնքահոր համար*: Իսկ այստեղ գործածված է որպես դիմելաձև):
- Հեղինակն ի՞նչ բառերով է նկարագրում ճպուռի վիճակը ձմռանը (զընգր-զընգր դողալով):
- Առակում ո՞ր իմաստով է գործածված *շունչ առնեմ* արտահայտությունը (այն գործածված է փոխաբերական իմաստով և նշանակում է *կենդանանամ, ոգևորվեմ*):

6. Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով

Կարելի է առաջադրել հարցեր: Հարցերի մոտավոր բովանդակությունը՝ ըմբռնման կարողություններ-գիտելիք.

- Պատմե՛ք, թե ինչ էր անում ճպուռն ամռանը:
- Ի՞նչ պատահեց, երբ ձմեռը եկավ:
- Ի՞նչը ստիպեց ճպուռին գնալ մրջյունի մոտ:
- Ի՞նչ պատասխանեց մրջյունը ճպուռին:

Եզրահանգումներով պայմանավորված ըմբնման կարողություններ-ընկալում, վերլուծություն.

- Ճպուռն ինչու՞ որոշեց գնալ հենց մրջյունի մոտ:
- Ինչու՞ է ճպուռը խնդրում մրջյունին «ապրեցնել» իրեն հատկապես մինչև գարուն:
- Մրջյունն ինչու՞ ճպուռին առաջարկեց «վեր-վերի բռնել»:
- Ինչպիսի՞ն էր ճպուռը՝ ըստ տեքստի: Տեքստի ո՞ր տողերով կարող ես հիմնավորել, որ նա ծույլ էր ու անհեռատես:
- Քո կարծիքով ի՞նչ պետք է աներ ճպուռը:
- Քո կարծիքով ինչպիսի՞ն էր մրջյունը:
- Ի՞նչ խորհուրդ կտայիր ճպուռին:Իսկ մրջյունի՞ն:

Համադրման և գնահատման միջոցով ըմբնելու կարողություններ

- Գնահատե՛ք մրջյունի վերաբերմունքը ճպուռի խնդրանքի նկատմամբ:
- Մրջյունն ինչու՞ չօգնեց ճպուռին:

- Ինչո՞վ է մրջյունը նման ճպուռին: Իսկ ինչո՞վ է տարբերվում:
- Առակի ո՞ր հերոսի հետ կուզենայիր ընկեր լինել: Ինչու՞:
- Ինչպե՞ս կբացատրեիք ճպուռին, թե ինչ պետք է աներ, որպեսզի ձմռանը քաղցած և անօթևան չմնար:
- Նկարագրե՛ք, թե մրջյունն ինչպե՞ս է մերժում ճպուռին:
- Կարելի՞ է արդյոք մրջյունին և ճպուռին համարել ընկերներ:
- Որոշե՛ք առակի հենակետային բառերը:
- Այս առակը գրելով՝ հեղինակն ի՞նչ նպատակ էր հետապնդում:
- Մարդկային բնավորության ո՞ր գծերն են քննադատվում առակում (ծուլությունը, անտարբերությունը):
- Ի՞նչ զգացմունքներ ունեցաք: Շարունակե՛ք նախադասությունը. Ես զգացի…

Կա՞ տեքստում մի բան, որը ձեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել:

7. Աշխատանք առած-ասացվածքների շուրջ

Կարելի է կազմակերպել «Գուշակի՛ր առածը, ասացվածքը» խաղը:

Այսպես՝ դասարանը բաժանվում է 4 խմբի, յուրաքանչյուր խմբին տրվում է մեկ ասացվածք, որի սկիզբն ու ավարտը գրված են տարբեր քարտերի վրա: Խմբերը պետք է ամբողջացնեն ասացվածքները՝ ընտրելով սկզբին համապատասխան ավարտ, այնուհետև մտածեն, թե ինչպես պետք է մնջախաղով ներկայացնեն ասացվածքի բովանդակությունը, որ մյուս խմբերը գուշակեն, թե ո՛ր ասացվածքի մասին է խոսքը: Խմբերին առաջադրվում են հետևյալ ասացվածքները.

Աջով տուր, որ ձախով առնես:

Ինչ որ ցանես, այն էլ կհնձես:

Լավություն արա, ջուրը գցիր:

Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:

8. Աշխատանք ընթերցողական կարողությունների զարգացման նպատակով

Ընթերցելու կարողությունների կատարելագործման և լուռ կարդալու ունակության զարգացման նպատակով կարելի է անցկացնել ընտրովի ընթերցանություն:

Ընտրովի ընթերցանության ժամանակ աշակերտները ուսուցչի հանձնարարությամբ նախ՝ լուռ կարդում են տեքստը, գտնում պահանջվող

նախադասությունը կամ պարբերությունը, ապա՝ բարձրաձայն ներկայացնում են այն:

Հարցեր ընտրովի ընթերցանության համար

- Վերընթերցի՛ր այն տողերը, որտեղ նկարագրվում են ճպուռի ամառային օրերը, և պատմի՛ր:
- Կարդացե՛ք այն հատվածը, ուր նկարագրվում է ձմեռային բնությունը:
- Ընթերցի՛ր այն տողերը, որոնք պետք է կարդալ ցածր, բարձր, շատ բարձր:
- Տեքստից ընտրի՛ր այն հատվածները, որոնք վերաբերում են նկարների բովանդակությանը:
- Կարդացե՛ք այն տողերը, որտեղ մրջյունը խիստ դատապարտում է ճպուռին:
- Վերընթերցե՛ք առակի «Քամին ծափ տա, դու պարի» տողերը: Մեկնաբանի՛ր այդ տողերի իմաստը:

Կարելի է նաև բեմականացնել առակը՝ կատարելով հետևյալ նախապատրաստական աշխատանքները

- Քանի՞ հերոս պետք է մասնակցի բեմականացմանը (երեք՝ հեղինակ, մրջյուն և ճպուռ):
- Ի՞նչ եք կարծում, քանի՞ գործողություն կլինի բեմականացման ընթացքում (երեք):
- Արդյո՞ք ճպուռի կերպարը միանման կլինի բոլոր գործողությունների ընթացքում (ոչ):
- Ինչպիսի՞ն պետք է լինի ճպուռը առաջին գործողության ժամանակ (գեղեցիկ, ուրախ, գլխին վարդագույն գլխարկ, ձեռքին՝ պայուսակ, հովհար և հովանոց՝արևից պաշտպանվելու համար):
- Ինչպե՞ս կփոխվի ճպուռի կերպարը երկրորդ գործողության ժամանակ (խղճուկ վիճակ, հագուստն աղտոտված, պատռված, կոշիկները ցեխոտ):
- Իսկ ինչպիսի՞ն կլինի ճպուռը երրորդ գործողության ժամանակ (գլխին շոր գցած, հին վերարկու հագած, ոտքերին՝ մաշված կոշիկներ, ձեռքին կեղտոտ թաշկինակ):

- Իսկ կփոխվի՞ արդյոք մրջյունի կերպարն ամբողջ բեմականացման ժամանակ (ոչ, մրջյունը միշտ նույն աշխատանքային հագուստով է):
- Ինչո՞վ էր զբաղված ճպուռն ամռանը (երգում էր, պարում էր):
- Իսկ մրջյունն ի՞նչ էր անում այդ ընթացքում (աշխատում էր):
- Ինչպե՞ս կարելի է բեմադրել ճպուռի՝ մրջյունի տուն գալը (գլուխը՝ ներքև, ոտքերը քարշ տալով):
- Ի՞նչ հնչերանգով է ճպուռը մրջյունին դիմում (խեղճացած):
- Իսկ ի՞նչ հնչերանգով է պատասխանում մրջյունը (անտարբեր):
- Ի՞նչ հնչերանգով է անհրաժեշտ ներկայացնել հեղինակի խոսքերը (ծաղրանքով):

Տեքստի ընթերցումից հետո

9. Ստեղծագործական աշխատանքներ

Առաջադրանքների օրինակներ

- Համառոտ պատմի՛ր առակը՝ դեպքերը փոխելով այնպես, որ մրջյունը ճպուռին ներս թողնի:
- Արձակ շարադրի՛ր առակի բովանդակությունը՝ փոխելով ավարտը:
- Հորինի՛ր մի հանելուկ մրջյունի մասին:

10. Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար

- Տեքստից դո՛ւրս գրիր փոխաբերական իմաստ ունեցող արտահայտություններ:
- Կազմի՛ր նախադասություններ՝ փոխաբերական իմաստ ունեցող քո դուրս գրած արտահայտություններով:
- Գրի՛ր մի փոքրիկ շարադրանք՝ փոխաբերական իմաստ ունեցող քո դուրս գրած արտահայտություններով:

Կշռադատում

11. Անդրադարձ

Կարելի է կիրառել «Անկյուններ» վարժությունը, որի նպատակը հակասական հարցերի շուրջ բանավեճ ծավալելն է:

– Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ վարվեց մրջյունը:

Ամփոփում

– Ի՞նչ խորհուրդներ կտայիք մրջյունին և ճպուռին:

Օրինակ՝

Ճպուռին կարելի է տալ հետևյալ խորհուրդները. մտածի՛ր վաղվա օրվա մասին, այլևս ծուլություն մի՛ արա, եղի՛ր աշխատասեր, պատասխանատու, ինքնուրույն, ժամանա՛կ գտիր աշխատելու համար:

Իսկ մրջյունին կարելի է տալ հետևյալ խորհուրդները. եղի՛ր ձեռնբաց, անշահախնդիր, հոգատար, օգնի՛ր դժբախտության մեջ գտնվողին, հնարավորությո՛ւն տուր ուրիշներին՝ շտկելու իրենց սխալները:

Եզրահանգում: Այսպիսով՝

Ով աշխատի, նա կուտի:

Ով ալարի, ոչ դալարի [5]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ա) Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ: Այն այլաբանական բովանդակություն ունեցող փոքրածավալ պատմողական ստեղծագործություն է, որում հաճախ մարդկանց փոխարեն հանդես են գալիս կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներ, տիեզերական մարմիններ, որոնք անձնավորված են: Նրանց փոխհարաբերություններն այլաբանորեն ներկայացնում են մարդկային կյանքի զանազան խրատական, հաճախ երգիծական բովանդակություն:

Բ)Առակը տարբերվում է էպիկական ժանրի այլ գործերից միայն իրեն բնորոշ առանձնահատկություններով, ինչպիսիք են բարոյականության առկայությունը (որպես հիմնական գաղափարի ընդհանրացման միջոց), բովանդակության մեջ թաքնված իմաստի պարտադիր առկայությունը և այլաբանությունների օգտագործումը՝ որպես արտաքին պատկերների միջոցով մարդկային ակնհայտ արատները ցուցադրելու միջոց:

Գ) Առակի հետ աշխատանքը համարվում է ամենադժվար խնդիրներից մեկը դպրոցներում: Առակը գրավում է երեխաների ուշադրությունը, որովհետև պարունակում է հեղինակի՝ համամարդկային խնդիրների վերհանում՝ դատապարտելով մարդկանց վատ արարքը վառ գույներով, միևնույն ժամանակ երեխաներին սովորեցնում է մտածել, կերպարների և իրադարձությունների միջև որոշակի զուգահեռներ փնտրել: Չնայած տարրական դպրոցում ուսումնասիրվող այս ժանրի փոքր քանակին,նրանց համար զգալի աշխատանք է տարվում և անկախ ստեղծագործության քննության կարճ տևողությունից՝ առակը երեխաների մեջ մտապահվում է որպես բանաստեղծական գործի նմուշ: Հիշարժան պատկերների շնորհիվ հեղինակը ընթերցողներին սովորեցնում է նախորդ սերունդների կյանքի ընթացքում կուտակված խոր և իմաստալից ժողովրդական իմաստությունը:

Դ) Առակը լայնորեն ուսուցվում է դպրոցներում և դրական ազդեցություն ունի երեխայի ներաշխարհի զարգացման վրա: Հենց այստեղ էլ դրվում է այս ստեղծագործության ուսուցման հիմնաքարը: Դպրոցական տարիքում առակների ուսուցման առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ եզրակացնում ենք, որ մեծ է առակների դաստիարակչական, բարոյախրատական արժեքը: Դրանք

անգնահատելի դաստիարակչական ու բարոյախրատական նշանակություն ունեն և ուսուցումն արդյունավետ ու նպատակային են դարձնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1946թ. (599 էջ):
2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926, (2705 էջ):
3. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ-97, 2006թ. (321 էջ):
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Էդիթ Պրինտ, 2008 (159 էջ):
5. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Բալայան Ա.,Ինչպես պլանավորել մայրենիի դասը, Երևան, 2018թ. (455 էջ):
6. Թորոսյան Կ.,Սարգսյան Վ.,Խաչատրյան Հ.,Չիբուխչյան Կ., Մայրենի 4, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2015, [էջ 83-102]:
7. Համացանց-Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան:
8. Ջրբաշյան Էդ., Մախաչյան Հ., Գրականագիտական բառարան, Երևան,Լույս,1980 (340 էջ):
9. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, Լույս,1980 թ. (560 էջ):
10. Щепетова Н.Н., Методика чтения в начальной школе, М., 1950, стр. 158.
11. Каноныкин Н.П., Щербакова Н.А., Методика преподавания русского языка в начальной школе, Л., 1955, стр. 247.